ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

11 մարտի, 2024 թ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի մարտի 11-ին՝ ժամը 17:30-ին, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

| | |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ | Լիլիթ Թադևոսյանը |
| Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ | Հայկ Գրիգորյանը |
| Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ | Խաչատուր Պողոսյանը |
| Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ | Աննա Վարդապետյանը |
| Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան | Անահիտ Մանասյանը |
| Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար | Գրիգոր Մինասյանը |
| Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի | Պարույր Հովհաննիսյանը |

| | |
|---|---|
| նախարարի տեղակալ | |
| Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ | Սիմոն Բաբայանը |
| Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ | Ռուստամ Բաքոյանը |
| «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» նախագահ | Արթուր Սաքունցը |

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի ավագ մասնագետ Սերգեյ Հովհաննիսյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**Օրակարգային հարց՝** քննարկվեց 2024 թվականի մարտի 4-ի նիստում կայացված որոշումների արդյունքում պետական մարմիններ ուղարկված հարցումների և հավակնորդներին ուղարկված նամակների պատասխանների ամփոփման և փաստաթղթային ստուգման արդյունքում համապատասխան որոշում կայացնելու հարցը:

Հավակնորդներից Արմեն Մազմանյանի ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների առնչությամբ ամբողջական և լիարժեք պատկերացում կազմելու նպատակով Հանձնաժողովի առաջարկությամբ Արմեն Մազմանյանը մասնակցում էր իր կողմից ներկայացված փաստաթղթերի ստուգման փուլին:

Հաշվի առնելով աշխատանքային ժամի ավարտը՝ նիստը շարունակվեց մարտի 12-ին՝ ժամը 14:00-ին, տեսակապի միջոցով:

Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին՝

1. 1 հավակնորդից պահանջել իր ներկայացրած փաստաթղթում իրականացնել հայտնաբերված թերությունների (անհամապատասխանությունների) շտկում,
2. պետական մարմիններ ուղարկված հարցումների պատասխան գրությունների բովանդակային ուսումնասիրության արդյունքում պետական մարմիններից հավակնորդների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով ուղարկել հարցումներ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. ուղարկել լրացուցիչ նամակ 1 հավակնորդին՝ վերջինիս ներկայացրած փաստաթղթում հայտնաբերված թերության (անհամապատասխանության) շտկման վերաբերյալ: Շտկման և փաստաթուղթը կրկին ներկայացնելու համար սահմանվեց 1 օր (մինչև մարտի 13-ը ներառյալ),

2. պետական մարմիններ ուղարկված հարցումների պատասխան գրությունների բովանդակային ուսումնասիրության արդյունքում հավակնորդների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ուղարկել հարցումներ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝**

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան** **[ստորագրված]**

**Լիլիթ Թադևոսյան** **[ստորագրված]**

**Հայկ Գրիգորյան** **[ստորագրված]**

**Խաչատուր Պողոսյան** **[ստորագրված]**

**Աննա Վարդապետյան** **[ստորագրված]**

**Անահիտ Մանասյան** **[ստորագրված]**

**Գրիգոր Մինասյան (11.03.2024)** **[ստորագրված]**

**Արա Մկրտչյան (12.03.2024)** **[ստորագրված]**

**Պարույր Հովհաննիսյան** **[ստորագրված]**

**Սիմոն Բաբայան** **[ստորագրված]**

**Ռուստամ Բաքոյան** **[ստորագրված]**

**Արթուր Սաքունց** **[ստորագրված]**

Արձանագրող՝ Սերգեյ Հովհաննիսյան **[ստորագրված]**